ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948 թ., № 8 *Общественные науки*

Ակ. Մնացականյան

ՌՈՒՍԱԿԱՆ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՆ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ 1917 ԹՎԻՆ

1917 թվականի Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից հետո, ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում, բոլշևիկները դուրս եկան խորը ընդհատակից և ծավալեցին բացահայտ գործունեություն։ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները՝ զինվելով Լենինի և Ստալինի իմաստուն ցուցումներով, ակտիվ աշխատանք էին կատարում բանվորներին ու չքավոր գյուղացիներին ռևոլուցիայի դրոշի տակ համախմբելու և ժամանակավոր կառավարության ու նրա տեղական օրգանների ռեակցիոն բնույթը բացահայտելու համար։

Մի կողմից երեք տարի շարունակվող իմպերիալիստական պատերազմը, որ մղվում էր Հայաստանի տերիտորիայում 1914—1917 թ. թ. մյուս կողմից թուրքական բարբարոսների հայաջինջ քաղաքականությունը, Հայաստանը հասցրել էին կործանման դուռը։ Հայ ժողովրդի դեռևս կենդանի մնացած մասը մահվան սպառնալիքի տակ էր դրվում իմպերիալիստական գիշատիչների և նրանց դաշնակցական ու էսեռո-մենշևիկյան գործակալների քաղաքականությամբ։

Հայաստանի բոլշևիկները հանդես էին գալիս որպես աշխատավորների շահերի իսկական պաշտպաններ, ճշմարիտ հայրենասերներ։

Կատարելով բոլշևիկյան պարտիայի 1917 թ. ապրիլյան կոնֆերանսի և 6-րդ համագումարի պատմական որոշումները, Հայաստանի բոլշևիկները անձնազոհությամբ մարտնչում էին՝ բանվորներին ու գյուղացիներին պայքարի դուրս բերելու՝ հանուն Սովետական իշխանության, նրանց ազատագրելու համար կալվածատերերի ու բուրժուազիայի շահագործման լծից, դուրս բերելու Հայաստանը տնտեսական ու կուլտուրական հետամնացությունից և պայքարումից։

1

1917 թվականին Հայաստանում ստեղծվել էր առանձնահատուկ իրադրություն։ Հայաստանի բոլշևիկները իրենց գործունեությունը կենտրոնացնում էին հատկապես բանվորների և չքավոր գյուղացիների մեջ և պայքար էին ծավալում Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար։

Վլադիմիր Իլիչ Լենինի և Ի. Վ. Ստալինի հավատարիմ աշակերտներ ընկ. ընկ. Ստ. Շահումյանը և Անաստաս Միկոյանը բոլշևիկյան պարտիայի շուրջն էին համախմբում Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին։ Շահումյանի և Միկոյանի ղեկավարությամբ հայ բանվորնե-

րի, գյուղացիների և զինվորների մեջ ակտիվ ռևոլուցիոն աշխատանք էին ծավալում բոլշևիկներ Ա. Մռավյանը, Ստ. Ալավերդյանը, Բ. Ղարիբջանյանը, Գ. Աթաբեկյանը, Կորզանովը և ուրիշները։ 1917 թ. փետրվարից մինչև հոկտեմբեր ամիսները Հայաստանում ստեղծվում էին բոլշևիկյան նոր բջիջներ. նրանց շարքերն ընդունվում էին հայ բանվորների ու գյուղացիների ծոցից գուրս եկած լավագույն ռևոլուցիոներները, որոնք իրենց ամբողջ կյանքը նվիրում էին սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակի համար մղվող պայքարին։

1917 թվականին, բոլշևիզմի գաղափարների տարածման և բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին ռևոլուցիոն գաղափարներով տոգորելու ուղղությամբ, հսկայական աշխատանք կատարեցին նոր ստեղծված բոլշևիկյան թերթերը։

1917 թ. մայիսի 1-ին սկսեց լույս տեսնել «Սոցիալ դեմոկրատ» հայերեն թերթը, որի պատասխանատու խմբագիրն էր Ստ. Շահումյանը։ Այդ թերթին մոտիկից աշխատակցում էին ընկ. ընկ. Ա. Միկոյանը, Հակոբ Հակոբյանը, Հակոբ Կամարին և ուրիշ բոլշևիկներ՝ Կովկասի տարբեր վայրերից։

Հենց առաջին համարում թերթը գիմում է հայ բանվորներին հատուկ կոչով։ Այդ դիմումի մեջ թերթը բացատրում է, որ դաշնակցականների, էսեռների և մենշևիկների քաղաքականությունը հայ բանվորներին ու գյուղացիներին չտվեց «ազատ Հայաստան», այլ ստեղծեց «ավերակ Հայաստան»։[1] Մերկացնելով Կովկասի կեղծ սոցիալիստների հակաժողովրդական գործունեությունը, թերթը գրում է.

«Կովկասին ամենից առաջ հարկավոր է միջազգային համերաշխություն։ Այդ համերաշխության ճանապարհով գնում է Կովկասում միմիայն միջազգային սոցիալ-դեմոկրատիան։ Բանվորների շահերը միատեսակ են, լինեն նրանք հայ թե ռուս, վրացի թե թուրք»։

Թերթը հայ բանվորներին կոչ անելով գրում էր.

«Մեկնեցեք ձեր ձեռքը ռուս, թուրք, վրացի ընկերներին և կազմեցեք նրանց հետ մի անբաժան եղբայրական ընտանիք»։[2]

1917 թվականի հունիսի 22-ին Ալեքսանդրոպոլի (այժմ Լենինական) բոլշևիկյան կոմիտեն հրատարակեց իր օրգանը՝ «Նոր կյանք» մարտական թերթը, որի խմբագիրն էր Բ. Ղարիբջանյանը։ Ալեքսպոլի կոմիտեն միջոցներ չի ունեցել թերթի ծախսերը հոգալու համար։ Բանվորներն ու զինվորները կամպանիա ծավալելով կոպեկ առ կոպեկ փող են հավաքել «Նոր կյանքի» համար։ Թերթում տպված մի խումբ զինվորների նամակում կարդում ենք.

«Մենք, հայ զինվորներս, աչքի առաջ ունենալով, որ «Նոր կյանքը» թերթը առաջնորդում է մեզ դեպի ազատության գիրկը, մեր գաղափարներին զարկ տալով, մեզ տանում է դեպի նոր փառք, ողջունում ենք նրան։ Երբ ձեռք բերեցինք «Նոր կյանքը» թերթը, տեսանք, որ մեր ձեռքերից բռնած նա դուրս է քաշում մեզ վշտերի խորքից և տառապանքների ուռկանից։ Այդ ցավերը բոլորը ծանրաբեռնված էին մեր վզերին և գլորված էինք խոր անդունդը այն տգրուկ բուրժուաների արյուն քամող ձեռքերով։ «Նոր կյանք»-ը հույս ներշնչեց մեր սրտերում և ճաճանչեց մեզ

[1] «Սոցիալ դեմոկրատ», № 1, 1917 թ.։
[2] Նույն տեղում։

լույսի ճառագայթներ։ Այդ լույսի շողերով ահա շտապում ենք հավաքվել «Նոր կյանք» լրագրի շուրջը և նվեր ենք տալիս յուրաքանչյուր զինվորս մեր աղքատ միջոցներից»։[1]

Ալեքսանդրոպոլի կոմիտեի և նրա թերթի գործունեությունը ծավալվում էր քաղաքի բանվորների, արհեստավորների մեջ, երկաթուղայինների և կայազորի զինվորների մեջ, ինչպես և Շիրակի գավառի չքավոր գյուղացիության շրջաններում։

Արևելյան Հայաստանում, հատկապես Զանգեզուրում՝ բոլշևիկյան գաղափարների պրոպագանդայի գործում լայն աշխատանք էին կատարում Բաքվում և Շուշում հրատարակվող բոլշևիկյան թերթերը։

2

Հայաստանի բոլշևիկների ռևոլյուցիոն աշխատանքը տարվում էր ամբողջ ճակատով։ Ընկեր Շահումյանը փետրվար—հոկտեմբեր ամիսների ընթացքում հանդես էր գալիս մեկ Բաքվում, մեկ Թբիլիսիում, Անդրկովկասի ուրիշ քաղաքներում ու գավառներում և համախմբում էր բազմազգ բանվորներին, զինվորներին, գյուղացիներին Լենինի-Ստալինի դրոշի ներքո։

Ընկեր Ա. Միկոյանը Անդրկովկասի տարբեր շրջաններում հանդես էր գալիս ճառերով, զրույցներով, մամուլում տպում էր բազմաթիվ հոդվածներ, որոնց մեջ անողոք կերպով մերկացնում էր բոլշևիզմի հակառակորդներին։

1917 թ. մարտին Թուրքական ճակատից Վաղարշապատ էին վերադարձել Կովկասյան բանակի զորամասերը։ Այդ զորքի մի մասը ենթարկվելով դաշնակների և էսեռների պրովոկացիային, Վաղարշապատում առաջ էին բերել անարխիա, թալան, հրկիզումներ։ Այդ օրերին Վաղարշապատ է գալիս ընկեր Միկոյանը, ռևոլյուցիոն խոշոր աշխատանք է կատարում զորքի մեջ։ Ընկեր Միկոյանի գործունեության մասին 1917 թ. մարտի 7-ի հաղորդագրության մեջ կարդում ենք.

«Միկոյանը՝ գլխավորելով Վաղարշապատի կոմունիստներին և ռևոլյուցիոն տարրերին, մինչև լուսաբացը համառ բոլշևիկյան ագիտացիա ծավալեց ֆրոնտից Վաղարշապատ վերադարձած 6 հազար զորքի մեջ... Միկոյանի բոլշևիկյան համառ ագիտացիայի շնորհիվ կտրականապես կանխվեց ծավալվող անարխիան։ Լուսաբացին բոլշևիկների ջանքերով հրավիրվեց զորքի միտինգ, ուր ռևոլյուցիայի խնդիրների մասին ճառով հանդես եկավ ընկեր Միկոյանը»։[2]

Մի քանի օրից ընկեր Միկոյանը Հայաստանից մեկնում է Թբիլիսի։ Այստեղ Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոներները ջանքեր էին թափում «Գյուղացիական ազգային միություններ» կազմակերպելու համար։ Ընկեր Միկոյանը համառ պայքար է ծավալում դաշնակների, մենշևիկների, մուսավաթականների այդ գործունեության դեմ։ Ընկ. Միկոյանը «Պայքար» թերթում հրապարակում է իր հոդվածն այդ հարցի մասին, որի մեջ վերլուծում է Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի գյուղացիության դրությունը, բուր-

[1] «Նոր կյանք» № 6, հուլիս, 1917 թ.։
[2] ՀԿ(բ)Պ Կենտկոմին կից Պարտ. արխիվ, ֆոնդ 11, գործ 3, թերթ 4.

ժուական պարտիաների կործանիչ տակտիկան։ Նա փաստեր է բերում, որ դաշնակցականներն էջմիածնում գյուղացիական ազգային միություններ են կազմակերպել, որոնց նպատակն է չքավոր գյուղացիությանը շեղել դասակարգային պայքարից։

«Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիան,— գրում է ընկ. Միկոյանը,— կոչ է անում Կովկասի բոլոր ազգերի գյուղացիներին՝ հայերին, թուրքերին, վրացիներին՝ կազմակերպվել միջազգային դասակարգային գյուղացիական միության մեջ, անողոք դասակարգային պայքար մղել կոնտրռևոլուցիոն տիրապետող դասակարգի դեմ և հանուն մեր բոլորիս երազած լավ ապագայի, կռել ու կռփել բոլոր ազգերի և բոլոր երկրների աշխատավորության միջազգային համերաշխությունը»։[1]

Մայիսի 24-ին արդեն ընկեր Միկոյանը հանդես է գալիս Բաքվում, «Ջարբաբ» ընկերության հայ բանվորների ժողովում, իսկ մայիսի 26-ին գեկուցում է Բիբի-Հեյբաթի բանվորների ժողովում «Հողի բռնագրավման մասին»։ 1917 թ. հուլիսին ընկ. Միկոյանը հրապարակում է «Մարքսիզմի ռենեգատները» հոդվածների շարքը, որոնց մեջ անողոք կերպով մերկացնում է բուրժուական պարտիաների կեղծ հայրենասիրությունը և շովինիզմը։ Ընկեր Միկոյանն իր հոդվածներից մեկում լենինյան դիրքերից խորը քննադատության է ենթարկում Պլեխանովի շովինիստական հայացքները և նրանց հայկական պաշտպան Պիճիկյանի գործունեությունը, որն ուզում էր հայ բանվորներին ենթարկել սոցիալ-շովինիզմի ազդեցությանը։

1917 թ. հունիսյան դեպքերը խոր արձագանք են գտնում Հայաստանում։ Դաշնակցականներն ամեն կերպ աշխատում էին Հայաստանի բանվորներին և գյուղացիներին հեռու պահել ռուսական ռևոլուցիայի ազդեցությունից և նրանց տանել անգլո-ամերիկյան իմպերիալիստների առաջ խոնարհաբար ծառայելու ճանապարհով։

Ալեքսոլի բոլշևիկները հունիս և հուլիս ամիսներին ավելի ևս ակտիվացնում իրենց աշխատանքը գործնական պայքարով արձագանքելով Պետրոգրադում տեղի ունեցող դեպքերին։ «Նոր կյանք» թերթը 1917 թ. հունիսի 25-ի համարում քննադատում է դաշնակների դավաճանական արարքները Երևանում, որտեղ նրանք բուն էին դրել և սև աշխատանք էին կատարում՝ Հայաստանի ռևոլուցիոն շարժումների դեմ։ Հուլիսի 9-ին Ալեքսոլի բոլշևիկներն իրենց օրգանի էջերից մի կոչով դիմում են «Բոլոր զինվորներին»։ Այդ կոչի մեջ հաղորդում են Պետրոգրադում ծավալված ռևոլուցիոն պայքարի մասին և կանգ են առնում Հայաստանի բանվոր դասակարգի առաջ կանգնած խնդիրների վրա։ Կոչը վերջանում է հետևյալ խոսքերով.

«Ռևոլուցիայի ալիքները բարձրանում են ավելի ուժեղ. նրա մոնչյունի արձագանքները լսվում են արդեն ամբողջ աշխարհում»։

Հուլիսյան օրերին Հայաստանի բանվորներն իրենց ձայնը միացնում են Ռուսաստանի պրոլետարիատի ձայնին։ Հայաստանի բանվորները միայն ռուսական ռևոլուցիայի հաղթանակի մեջ էին տեսնում իրենց ազատագրական պայքարի ելքը։ Այդ մասին է գրում «Նոր կյանքը».

---

[1] ՀԿԿ Պ Կենտկոմին կից Պարտ. արխիվ, ֆոնդ 11, գործ 2, թերթ 121։

[2] «Նոր կյանք» № 6, 1917 թ. Ալեքսանդրոպոլ։

«Ալեքսանդրոպոլի թշվառ ու կեղեքվող բանվորությունը ներկա կարգերում շարունակում է իր պրոլետար ուսերի վրա տանել այն բոլոր ծանր պայմաններն ու տանջանքները, որ գրված են եղել նրա վրա ռեակցիայի, ցարի բռնակալության օրերում»։[1]

Հայաստանի բանվորները, այդ թվում և Ալեքսոլի բանվորները, լիովին հավատում էին ռուսական հեղափոխության հաղթանակին, հավատում էին, որ մոտ է իրենց ազատագրման օրը, դրա համար էլ ավելի ու ավելի համարձակ էին նետվում պայքարի հորձանքի մեջ։ «Նոր կյանքը» գրում էր.

«... Համոզված ենք խորապես, որ չկա ուրիշ ճանապարհ՝ ստեղծված դրությունից դուրս գալու, բացի այն, որ ամբողջ իշխանությունը անցնի բանվորների, զինվորների և գյուղացիների սովետների ձեռքը։ Այսօր Ռուսաստանի հեղափոխությունն ավելի լայնանում ու խորանում է, անշուշտ դնում է զարգացման բնական ճանապարհով... իսկ մենք, որ հավատում ենք մեծ հաղթանակներին, որ սպասում ենք ոսկեզօծ արեի ծագմանը, կերթանք մեր ճամփան առանց տատանումների և անշեղ։ Թող բոլոր նրանք, որ ապրում են վաղվա գեղեցիկ հույսով, որոնց հոգին բաբախում է ճշմարիտ սիրո և եղբայրության համար, որոնք նվիրված են տանջվածների սուրբ գործին... հավաքվեն մեր դրոշի տակ, որի վրա շողշողում է «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք»։»[2]

Հայաստանի բոլշևիկները պայքար էին հայտարարել ժամանակավոր կառավարության «Կորշեն 10 կապիտալիստ-մինիստրները» լոզունգով։

3

1917 թ. օգոստոսին բոլշևիկների պարտիայի 6-րդ համագումարում ընկ. ընկ. Շահումյանը և Ջափարիձեն ընտրվում են կենտկոմի կազմում։ Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկները, կատարելով ՌՍԴԲՊ-ի 6-րդ համագումարի որոշումները, բանվորներին և գյուղացիներին պայքարի են կոչում հանուն սոցիալիստական հեղափոխության հաղթանակի։

Սեպտեմբեր ամսին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները նախապատրաստվում են Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների համագումարին, որը կայանալու էր հոկտեմբերի սկզբներին։ Հաղպատի և Ալավերդու կազմակերպությունները Անդրկովկասյան համագումարի պատգամավոր են ընտրում ընկեր Ա. Միկոյանին։ Ընկ. Միկոյանը ժամանելով Թիֆլիս, եռանդուն աշխատանք է ծավալում համագումարի նախապատրաստման գծով։ Շուտով, ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեն ընկեր Ա. Միկոյանին ընտրում է Թիֆլիսի քաղաքային կոմիտեի քարտուղար, նրա վրա դնելով պարտավորություն՝ վարել ոչ միայն Թիֆլիսի Կոմիտեի գործերը, այլև մինչև երկրային համագումարը հարաբերություններ պահպանել գավառական կազմակերպությունների հետ։

Հոկտեմբերի 2-ին բացվում է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների երկրային համագումարը, որի ղեկավարն ու ուղղություն տվողը հանդիսանում է ընկ. Ստ. Շահումյանը։ Անդրկովկասի բոլշևիկների համա-

[1] «Նոր կյանք» № 2, 1917 թ.
[2] «Նոր կյանք» № 6, 1917 թ.
[3] ՀԿ(բ)Պ ԿԵՆԿոմին կից Պարտ. արխիվ, ֆոնդ 11, գործ 1, թերթ 4։

գումարը ամբողջովին ընթանում է պարտիայի 6-րդ համագումարում ընկեր Ստալինի տված պատմական զեկուցումների ոգով։ Համագումարում զեկուցումներով հանդես են գալիս ընկ. Շահումյանից բացի, նաև ընկերներ Միկոյանը, Մռավյանը, Աթարբեկյանը, Կորգանովը և ուրիշները։ Ընկեր Միկոյանը իր մի ելույթի մեջ հաղորդում է Հայաստանի բանվորների և գյուղացիների մեջ բարձրացող ռևոլյուցիոն տրամադրությունների և ակտիվ պայքարի մասին։ Ընկեր Միկոյանը համագումարին հաղորդել է.

«Հաղպատի և Ալավերդու սոցիալ-դեմոկրատական միացյալ կազմակերպությունները հարկադրված են պայքար մղելու տեղական կուլակների և դաշնակցականների դեմ։ Ինքնավարության տեղական օրգանի ընտրություններում մեզ հինգ անգամ ավելի շատ տեղ տվին, քան դաշնակցականներին։ Գյուղացիները կողմնակից են հողի բռնագրավմանը։ Ալավերդու գործարանի բանվորները, ինչպես և գյուղացիները՝ ընթանում են մեր պարտիայի հետևից»[1]

Համագումարը որոշում ընդունեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բոլշևիկների տակտիկայի մասին՝ սոցիալիստական ռևոլյուցիայի համար մղվող պայքարում։

Մոտենում են Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի հաղթանակի օրերը։ Մոտալուտ ռևոլյուցիայի զարկերակը լսվում էր նաև Անդրկովկասում, Հայաստանում։ Այդ ռևոլյուցիայի մոտեցման մասին էին խոսում բոլշևիկյան ժողովներում, բանաձևերում, բոլշևիկյան թերթերի էջերում տպված քաղաքական հոդվածները և գրական-գեղարվեստական նյութերը։ Բոլշևիկ Հակոբ Ղամարին և Հակոբ Հակոբյանը «Սոցիալ դեմոկրատ» թերթում տպված իրենց բազմաթիվ բանաստեղծություններում դրսևորում էին հայ բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն ոգին։ Հակոբ Հակոբյանը դիմում էր բանվորներին— «Նոր կյանքի արշալույս», «Նոր ուղի հարթողներ», «Աշխարհիս զարդարանք», «Հիացքի կերտողներ», ժամանակն է պայքարի դրոշը բարձրացնելու։

Կարևոր փաստաթուղթ է «Սոցիալ-դեմոկրատ» թերթի № 2-ում տպված «Հայ բանվորի նամակը»։ Այդ նամակը նկարագրում է հայ բանվորների թշվառ վիճակը և դրությունից դուրս գալու միակ ելքը համարում է զինված ապստամբությունը։ Նամակը կոչ է անում «Բոլոր հայ բանվոր ընկերներին, որ թևակոխում են ազատ Ռուսաստանի նոր կյանքը»... հպարտ ընթանալ դեպի ազատության կռիվը։

Ղամարին իր ռևոլյուցիոն շնչով գրված բանաստեղծության մեջ, պատկերելով բանվորների ազատագրական վեհ իդեալները, նրանց պայքարի է կոչում դեպի այդ կռիվը, դեպի ռևոլյուցիան.

«Ընկե՛ր, շտապիր՝ օրեր են գալիս. տենչալի՜ օրեր...»[2]

4

Եկան այդ տենչալի օրերը։ 1917 թ. հոկտեմբերի 25-ին Լենինի և Ստալինի ղեկավարությամբ Ռուսաստանում հաղթեց Սոցիալիստական Ռևոլյուցիան և

[1] „Кавказский рабочий“ № 169, 1917 г.

[2] «Սոցիալ-դեմոկրատ» № 2, 1917 թ.։

ստեղծվեց Սովետական կառավարություն։ Հոկտեմբերյան հեղաշրջումը լուծեց պատերազմը վերջացնելու, հողը ժողովրդին տալու, արտադրության վրա բանվորական վերահսկողություն հաստատելու, բանվորներին և չքավոր գյուղացիներին քաղաքական իշխանություն տալու և շահագործողների տիրապետությունը տապալելու արմատական հարցերը։

Ազգությունների ժողկոմ Ի. Վ. Ստալինի հանձնարարությամբ, բոլշևիկ Վահան Տերյանը նախապատրաստում է հայ ժողովրդին ինքնորոշման իրավունք տալու դեկրետը։ 1917 թ. դեկտեմբերին Սովետական կառավարությունը Լենինի և Ստալինի ստորագրությամբ հրապարակեց դեկրետ «Տաճկահայաստանի մասին»։ Այդ դեկրետը պարզաբանելու համար ընկեր Ստալինը գրեց իր նշանավոր հոդվածը, որի մեջ հանճարեղ խորաթափանցությամբ լուսաբանում է հայ տառապյալ ժողովրդի պատմական բախտը, ցույց է տալիս նրա ազատագրման ուղին, «Հայկական հարցի» լուծման ուղին։

«Պարզ է դառնում,— գրում է ընկեր Ստալինը,— որ ճնշված ժողովուրդների ազատագրման ուղին բանվորական ռևոլյուցիայի ուղին է, որն սկսված է Ռուսաստանում հոկտեմբերին։ Այժմ բոլորի համար պարզ է, որ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ճակատագիրը, հատկապես հայ ժողովրդի ճակատագիրը, սերտորեն կապված է Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի ճակատագրի հետ»։[1]

Ճնշված ժողովուրդների ազատության մասին Լենինի և Ստալինի կոչերը կայծակի արագությամբ տարածվեցին Հայաստանի քաղաքներում ու գյուղերում, թափանցեցին հայ բանվորների և աշխատավոր գյուղացիների սրտերը։ Հայաստանի գիտակից բանվորներն ու գյուղացիները կանգնեցին ռուսական սոցիալիստական ռևոլյուցիայի դրոշի տակ և սրտանց ողջունեցին Սովետական իշխանության հաղթանակը։ 1917 թ. նոյեմբերի 23-ին Ալեքսանդրոպոլ քաղաքում բոլշևիկները կազմակերպում են զինվորների, բանվորների և ռևոլյուցիոնորեն տրամադրված քաղաքացիների միտինգ, որին ներկա էին 5000 մարդ։ Միտինգում բոլշևիկյան կրակոտ ճառեր լսելուց հետո, ընդունվեց հետևյալ որոշումը.

«Միակ իշխանությունը, որ մեզ երաշխավորում է կայուն խաղաղություն, ամբողջ հողը և լիակատար ազատություն— դա Սովետների իշխանությունն է հանձին նոր բանվորա-գյուղացիական կառավարության»։[2]

Միտինգը իր ընդունած որոշման մյուս կետերում չի ճանաչում ազգայնական պարտիաների կողմից ստեղծված անդրկովկասյան կառավարությունը, չի ընդունում Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և պնդում է, թե Կովկասում չպետք է լինի ոչ մի այլ իշխանություն, բացի Սովետական իշխանությունից։

«Սրտանց ողջունում ենք ժողովրդական կոմիսարների հրատարակած բոլոր դեկրետներն ու կարգադրությունները, որոնք իրենց վճռական, մինչև այժմ չտեսնված քաղաքականությամբ խաղաղության հարցը դարձրել են օրվա հարց։[3]

---

[1] «Պրավդա» № 227, 1917 թ.,

[2] «Кавказский рабочий», № 212, 1917 г.

[3] Նույն տեղում։

Նույն օրը բազմամարդ միտինգներ են տեղի ունենում Ալեքսանդրոպոլի կայազորի պահեստային հիմնարկներում, արհեստանոցների բանվորների մեջ, որտեղ բոլորը միասնաբար ողջունում են Հոկտեմբերյան հաղթական ռևոլուցիան։ Այդ միտինգի ընդունած բանաձևում ասված է.

«Ամբողջովին պաշտպանել բանվորական, զինվորական և գյուղացիների դեպուտատների Սովետներից կազմված ժողովրդական Դեմոկրատական Կառավարությունը, որ պաշտպանում է դարերով հարստահարված բանվոր և գյուղացի ժողովրդի շահերն ու ազատությունը։ Մենք պահանջում ենք, որ այդ իշխանությունը երկիրը կառավարի առանց բուրժուական դասակարգերի ներկայացուցիչների մասնակցության»։

1917 թ. նոյեմբերի 8-ին Սարիղամիշում տեղի է ունենում միտինգ, որին մասնակցում են մի քանի հազար զինվորներ, բանվորներ և գյուղացիներ։ Այդ միտինգն ընդունում է հետևյալ որոշումը.

«1. Մենք փոփոխված համառուսական իշխանություն ճանաչեցինք միայն բանվորա-գյուղացիական սովետական կառավարությունը, որը կպաշտպանենք ինչպես խոսքով, այնպես էլ գործով։

2. Մենք մերժում ենք ընդհանրապես ամեն մի ինքնակամ իշխանություն և մասնավորապես չենք ճանաչում ու չենք ենթարկվում Անդրկովկասյան ինքնակոչ Կոմիսարիատին, որը չի ուզում ճանաչել մեր կենտրոնական բանվորա-գյուղացիական իշխանությունը և դրանով նպաստում է Անդրկովկասի անջատմանը Ռուսաստանից»։[1]

Գեներալ Վիշինսկին, որը հանդիսանում էր Սարիղամիշի զորքի ղեկավարը, սարսափահար լինելով ռևոլուցիոն ժողովրդից և զինվորներից, շտապով զեկուցագիր է գրում Անդրկովկասյան ռազմական մինիստրին, որի մեջ հաղորդում է Սարիղամիշի բոլշևիկների գործունեության և ռևոլուցիոն վերելքի մասին։[2]

Ռուսական սոցիալիստական ռևոլուցիայի թևավոր կոչերը ոտքի հանեցին Հայաստանի աշխատավոր գյուղացիներին։ 1917 թ. նոյեմբերի 16-ին Ջալալօղլիում (այժմ Ստեփանավան) տեղի է ունենում գյուղացիների և զինվորների միտինգ նվիրված ռուսական ռևոլուցիային։ Միտինգը ընդունում է մի բանաձև, որի մեջ ասված է.

«Մենք Ջալալօղլու կայազորի տարբեր զորամասերի զինվորներս և Ջալալօղլի գյուղի բնակիչներս, զեկուցում լսելով ընթացիկ մոմենտի մասին, կայացրինք հետևյալ որոշումը.

Ամբողջ իշխանությունը պետք է գտնվի բանվորական, զինվորական և գյուղացիական դեպուտատների Սովետների ձեռքին, որպես ժողովրդի շահերի իսկական պաշտպանների։ Ո՛չ մի վստահություն կոնտրռևոլուցիոն բուրժուազիային և նրա հետ համաձայնության եկած էսեռներին ու մենշևիկներին։ Մեր ողջույնն ենք հղում Պետրոգրադի կայազորին ու պրոլետարիատին, որոնք կանգնած են ազատության և ռևոլուցիայի պաշտպանության դիրքերում։

Կեցցե՛ Սովետների իշխանությունը»։[3]

[1] Նույն տեղում։
[2] Военно-историч. архив штаба Кавказской армии, ср. 9 д., 15, л. 2 (Тбилиси).
[3] „Кавказский рабочий" № 202, 1917 г.

Այդ դեպքերից հետո Հաղպատում բոլշևիկները կազմակերպում են գյուղացիների ժողով, որին մասնակցում են 200 մարդ, մեծ մասամբ հայ կանայք։ Գյուղացիական այդ ժողովը, լսելով զեկուցում ռուսական հեղափոխության մասին, միահամուռ որոշում է ընդունում, որի մեջ դատապարտում է Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը, դաշնակցական-էսեռ-մենշևիկյան կոմիսարիատը հայտարարում է ժողովրդի թշնամիների մի բլոկ։ Ժողովը ողջունում է Սովետական կառավարության դեկրետները և պնդում, որ Հայաստանում միակ օրինական իշխանությունը կարող է լինել Սովետների իշխանությունը»։[1]

1917 թ. դեկտեմբերի 8-ին Համադան քաղաքում կանգնած զորամասերի ռուս, հայ, վրացի, օս զինվորների համերաշխ միտինգը քննում է հեղափոխության հաղթանակի մասին հրապարակված հաղորդագրությունը։ Զինվորների միտինգը միաձայն որոշում է չենթարկվել Անդրկովկասյան կոմիսարիատին, որն Անդրկովկասն անջատում է Ռուսաստանից. Լենինի-Ստալինի գլխավորությամբ կազմված ժողկոմսովետը ճանաչելով միակ օրինական իշխանությունը, զինվորները որոշում են իրենց դնել ժողկոմսովետի տրամադրության տակ և ենթարկվել միայն նրա հրամաններին։[2]

Հեղափոխության արձագանքներն ավելի խոր ազդեցություն էին թողնում գյուղում, որտեղ հայ աշխատավորը կարոտ էր հողի, հացի, ազատության։ Արխիվային մի շարք փաստաթղթեր խոսում են Էջմիածնի, Զանգիբասարի, Սարգարաբադի, Սևանի, Կոտայքի և ուրիշ շրջանների գյուղերում բատրակների ու չքավորների կողմից կալվածատերերի և կուլակների հողերի բռնագրավման մասին, որ կատարվում էր 1917 թ. աշնանը Հոկտեմբերյան Սոցիալիստական Հեղափոխության անմիջական ազդեցության տակ։ Այդ փաստաթղթերը պատմում են նաև Կողբի աղահանքերի բանվորների գործադուլի մասին, հարուստ նյութ են տալիս այն մասին, որ հայ ժողովուրդը չէր հանդուրժում Հայաստանը գաղութացնելու եկած անգլո-ամերիկյան իմպերիալիստների և նրանց դաշնակցական լակեյների շահագործման լուծը և ատելությունը կուտակած հոգու խորքում, պայքարում էր իր ազատության համար։ Ամփոփելով Սահմանադիր ժողովի ընտրական կամպանիայի ժամանակ մղված պայքարի արդյունքները, Ստ. Ալավերդյանը հայ ժողովրդի մասին 1917 թ. նոյեմբերի 25-ին գրում է.

> «Նա երես դարձրեց նրանցից, ովքեր խաղաղության փոխարեն նրան զոհ բերեցին անգլո-ամերիկյան բուրժուազիային... Նա երես դարձրեց նրանցից, ովքեր Պետրոգրադի կայազորին ու պրոլետարիատին՝ բուրժուազիայի ու կալվածատերերի դեմ նրանց մղած հերոսական պայքարում՝ պաշտպանելու փոխարեն, նրանց վրա շարժեցին կոնտրռևոլուցիոն յունկերներին։ Մասսան երես դարձրեց։ Նա ընթանում է լիակատար ազատագրման ուղիով՝ սոցիալիզմի ուղիով։ Նա ընթանում է այն պարտիայի հետևից, որը տանում է այդ նպատակին, ռևոլուցիոն պրոլետարիատի և չքավոր գյուղացիության պարտիայի, բոլշևիկների հետևից»։[3]

---

[1] «Кавказский рабочий» №15, 1918 г. январь.
[2] Նույն տեղում։
[3] «Кавказский рабочий». № 208, 1917 г.

Հայ ժողովուրդը ամուր կանգնեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի դրոշի տակ և պայքարի դուրս եկավ Հայաստանում Սովետական իշխանության հաստատման համար։ Այդ պայքարը գլխավորում էին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները Լենինի և Ստալինի անմիջական ցուցումներով։

Ռուսական սոցիալիստական ռևոլուցիան հաղթական երթով տարածվեց Հայաստանում, օգնեց հայ ժողովրդին՝ ազատագրվելու իմպերիալիզմի և նրա կամակատար դաշնակների լծից, դուրս գալու սոցիալիզմի լայն ճանապարհը։